Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

12

ՎԱՆՔԻ ԿՌԻՎԸ

Խեղդ աշուն էր:

Լուր առա, որ իմ ամենասիրած երկու հերոսները իրենց զինվորներով պաշարված են Առաքելոց վանքում: Բաղեշի Ալի փաշան երեք հազար զորքով շրջապատ ել էր վանքը, կամենալով բռնել հայդուկներին: Եվ արդեն մի քանի ծանր մարտեր էին մղվել ներսից դիմադրող մի խումբ հայդուկների և դրսից հարձակվող հազարավոր զորքերի միջև:

Լսեցի, որ Մուշից բանագնացներ են մեկնելու վանք, և սրանց մեջ լինելու է նաև Հեսոս վարդապետը: Նրանք գնալու էին սուլթանի կողմից բանակցություններ վարելու Անդրանիկի և Գևորգ Չաուշի հետ: Ընդամենը երեք հոգի էին. երկու բարձրաստիճան թուրք պաշտոնյա և մի երևելի հայ վանական:

Այս շորերով վանք մտնել կարելի չէր, ուստի փոխեցի իմ տարազը, հագա երիտասարդ վարդապետի զգեստ և կարմիր իրիցու ավետարանը թևիս տակ կանգնեցի այն ճանապարհին, որտեղից պետք է անցներ Հեսու վարդապետը:

Վերջապես բանագնացները երևացին: Երեքն Էլ ձիերի վրա Էին: Առջևից ընթանում էր Բաղեշի գաղտնի ոստիկանության պետ Մոլխտի էֆենդին՝ ճերմակ դրոշակը պարզած, ետևից Մեհմեդ էֆենդին էր գալիս կարմիր երեսին մի

բոլորակ սպի, սպիտակ սավանը փաթաթած վզի շուրջ: Երրորդը Հեսու վարդապետն էր աշխետ ձի հեծած: Ամրակազմ ծերունի էր, լայն կրծքի վրա տարածված փառահեղ սպիտակ մորուքով:

Հայր սուրբ, ասացի, ես Առաքելոց վանքի երիտասարդ վարդապետներից եմ. ուղարկված էի Տատրակ Արաբոյի տան կորած ավետարանը գտնելու: Ուզում եմ ներս մտնել, բայց վանքը պաշարված է:

Եկ, որդիս, ընկերացիր ինձ, ասաց Հեսուն, ավետարանը իմ ձեռքից առնելով: Ես լռությամբ միացա բանագնացների խմբին:

Ավա՜ղ, ես շատ փոխված գտա իմ հին ու ծանոթ մենաստանը: Մի օր առաջ եղանակը ավելի ցրտել էր, և ձյունը բարձր լեռներից իջնելով հասել էր վանքի դռներին: Վանքից դեպի հարավ մի մեծ կալ կար, որտեղ մանուկ օրերից աղավնիներ էի թռցնում դեպի զանգակատուն: Այդ ամբողջ կալը և կողքի տարածությունները պատած էին ձիավոր զորքով: Տեսնելով, որ դիմադրությունը երկարում է, Մուհամեդ Ալի փաշան և իր հարյուրապետները Մուշից հայ վարպետներ էին բերել և պարիսպներից երկու հարյուր քայլ հեռավորության վրա շինել էին գետնափոր տներ: Կառուցել էին նաև քարե պատնեշներ վանքը ռմբակոծելու համար:

Մատուռի մոտ բանագնացները ձիերից իջան: Սուրհանդակ մի կին ձեռքերը օդի մեջ բարձրացրած գնաց-եկավ՝ բերելով Անդրանիկի պատասխանը թե՝ «կարող եք գալ»: Ձիերը մատուռի մոտ թողնելով, երեք բանագնացները ոտքով առաջացան դեպի վանք:

Առջևից դարձյալ Մուխտի էֆենդին էր քայլում սպիտակ դրոշակը պարզած, ետևից Մեհմեդ էֆենդին և Հեսու վարդապետը: Վերջինի կողքից ես էի ընթանում երիտասարդ աբեղայի զգեստը հագիս:

Վանքի պարսպից լսվեց համազարկ, և մի քանի տասնյակ ֆեսեր թափվեցին ձյունների վրա: Մի ասկյար, որ ծառ էր բարձրացել, ուղիղ իմ ոտքերի մոտ ընկավ: նախ ֆեսը ընկավ, հետո ինքը:

Առաքելոցը երկու դուռ ուներ. մեկը փոքր, իսկ մյուսը՝ երկփեղկանի և կամարաձև: Երկփեղկանի դուռը ետևից ամրացած էր: Փոքր դռան առջև շատ արհեստական պատնեշներ և դիրքեր Էին փորված՝ ամեն զինվորի համար երեք դիրք՛ Ինը հայ մարտիկներ ամուր կանգնած Էին այդ դիրքերի մեջ: Առաջին դիրքից կրակելով արագ անցնում Էին դեպի մյուս երկուսը, մեծաքանակ ուժի երկյուղ ներշնչելով թշնամուն: Նրանց կողքին երկու հայ կին և մի զինված քահանա եռանդուն նոր դիրքեր Էին փորում:

Բայց իրապես վանքի հիմնական պաշտպանները երեսուն հոգի էին. իրենց ձեռքին ունենալով ընդամենը երեսունյոթ զենք, որից երկուսը՝ լախմախլի: Հազարավոր հրացաններից արձակված գնդակները ահավոր ձայներով գալիս զարկվում Էին վանքի պարիսպներին, իբրև պատասխան ընդունելով միայն այդ մի քանի հրացանների համրված փամփուշտները:

Ոստիկանապետ Մուխտու ձեռքին սպիտակ դրոշակ տեսնելով սուլթանի զորքը դադարի շեփոր հնչեցրեց, և մենք ասկյարների դիրքերն անցնելով հաղթական մոտեցանք մուտքին:

Մուխտին ֆեսը վայր առնելով երեք անգամ խոնարհվեց վանքին և, բարձրանալով, դրոշակի կոթով զարկեց փոքր դուռը:

Մուտքը արգելված Է, հնչեց սպառնական մի ձայն ներսից:

Մենք սուլթանի բանագնացներն ենք, և սպիտակի միջոցով փաշան մեզ արտոնել Է վանք մտնել, խոսեց ոստիկանապետը:

Դուռը բացվեց:

Մուտքի աջ ու ձախ կողմերում չորս թիկնեղ պահակ Էր կանգնած: Ամեն մեկը մի վառված գերան բռնած իր ծխամորճն էր վառում: Բեղի ծայրերից կախված սառցե լուլաները տաքությունից հալչելով թշշում էին կրակի վրա: Այնպիսի մի տեսարան էր, որ Մուխտի էֆենդին սարսափից ետ-ետ գնաց:

Ինչու՞ կուշանան, չէ որ հրաման եղած է, լսվեց Անդրանիկի ձայնը վերևից:

Հրաման եղած է, բայց վախենում են մտնել, զեկուցեց պահակներից մեկը՝ վառված գերանը ձեռքին դեպի սանդուղքը առաջանալով:

Վախենալու հարկ չկա: Կամ ներս թող գան և կամ հեռանան: Եթե մենք նրանց զարնել ուզեինք, Աստվածածնի մատուռի մեջ կզարնեինք: Հայդուկը խաբելով մարդ չի սպանի: Դուռը բացեք և սուլթանի մարդկանց առաջնորդեք ներս:

Հսկաներն իրենց հրավառ գերանները մի կողմ տարան, և մենք ապահով ներս մտանք: Դուռը գոցելու ժամանակ Մեհմեդ էֆենդոյ ոտքը անզգուշաբար դռան արանքը մնաց:

Կեցի՛ր, ոտքս կոտրեցիր, գոչեց ոստիկանապետի օգնականը ոտնաթաթը դռան արանքից դժվարությամբ հանելով և վզնոցի սպիտակ ծալքերը ուղղելով:

Ներսի տեսարանը պակաս ահաբեկիչ չէր: Մուտքից մինչև առաջնորդարանի սրահը զինված հսկիչներ էին շարված, որոնցից երեքը՝ դեպի վեր տանող քարե սանդուղքների վրա: Առաջինի կրծքին գրված էր «Որոտ», երկրորդին՝ «Կայծակ», երրորդին՝ «Ամպրոպ»: Ամպրոպ կոչվողը չորրորդ պահակի ձեռքից բոցավառ գերանը վերցնելով մեզ նրա լույսով ուղեկցեց մինչև առաջնորդարանի դուռը: Դռանը հսկում էին երկու բարձրահասակ տղամարդ՝ զինվորական կեցվածքով: Աջակողմյան զինվորը հրացանի կոթով դուռը բացեց, և մենք ներս մտանք:

Առաջնորդարանի սրահը մաքուր հավաքված էր, և բուխարիկը՝ վառ: Դիմացի պատի երկայնքով իրար վրա դարսված էին մի քանի տասնյակ սնդուկներ: Վրայի սնդուկներից մի քանիսը բաց էին վանքի պաշտպաններին փամփուշտ հասցնելու համար: Արկղների մոտ հատակին ցիրուցան թափված էին փամփուշտ լցնող գործիքներ, վառոդով լի տոպրակներ, դատարկ պարկուճներ:

Անդրանիկը նստած էր վառոդով և կապարով լի պարկերի կողքին, մեջքով դեպի արկղերը, ձախ ձեռքը զենքին, աջով հեռադիտակը բռնած: Դեմքի մկանները ձգված էին, ճակատը բարձր էր, խրոխտ, հայացքը վճռական, բայց հանգիստ: Հինգից ավելի զինվորներ սրահի մեկ կողմը կեցած հսկում էին զինարանին:: Նրանց մեջ մեկին ճանաչեցի, Մառնկա Պողեն էր:

Սուլթանի գլխավոր բանագնաց Մուխտի էֆենդու դողը բռնեց իրար վրա ահեղորեն դարսված փամփուշտի սնդուկները, վառոդով լի պարկերը և զինված հսկաների կապարյա դեմքերը տեսնելով: նրա լեզուն մի պահ կապ ընկավ, և դրոշակը քիչ մնաց ձեռքից վայր ընկներ:

Կատարյալ կերպով դուք ձեզ ապահով զգացեք, ասաց Անդրանիկը:

Բաշքոմիսերը հավաքեց իրեն և առաջանալով գլուխ տվեց հայդուկապետին: Նա և Մեհմեդ էֆենդին բարևեցին թուրքերեն, իսկ մենք՝ հայերեն:

Համբուրե, համբուրե, ասաց Հեսոլ վարդապետը իր աջը պարզելով նրան:

Մտածելիք ունեմ, պե՞տք է համբուրեմ, թե ոչ. իսկ այս երիտասարդ աբեղան ո՞վ է:

Սա Հովհաննես վարդապետի սաներից է և վանքից նվեր է բերել «Կոճղեզ» ավետարանը: Եթե իմ աջը չես ուզի համբուրել, զոնե այս մատյանը համբուրե, որդիս, ասաց Հեսուն, կարմիր իրիցու ավետարանը նրա շուրթերին մոտեցնելով:

Ես քո աջը կհամբուրեմ, որ դիպել է այս ավետարանին, ասաց հայդուկը և առավ Հեսու վարդապետի աջը: Ապա նայելով ինձ ժպտաց, կամենալով հասկացնել, որ Մոսե Իմոյի աղբյուրի մոտ իր և Գևորգ Չաուշի ինձ տված հանձնարարականը լրիվ կատարված է:

Այժմ նստեցեք, պատվիրակներին դիմելով առաջարկեց Անդրանիկը:

Բաշքոմիսերը ճերմակ դրոշակը հաստատեց կանաչ սփռոցով ծածկված սեղանին՝ գրավելով առաջին տեղը հայդուկապետի դիմաց: Երկրորդ աթոռը զբաղեցրեց Մեհմեդ էֆենդին: Սրա կողքին նստեց Հեսոլ վարդապետը, մինչև գոտկատեղը հասնող մորուքը հավաքելով կրծքի վրա:

Ծխել կարելի՞ է, հարցրեց Մուխտի էֆենդին:

Զգուշությամբ միայն, որովհետև կողքը մեր զինարանն է:

Զինվորներից մեկը վազեց դեպի բուխարիկը և ձեռքը կոխեց կրակի մեջ:

Ամա՜ն, մաշիգով վերցրու, մաշիգո՜վ, բացականչեց ոստիկանապետը նստած տեղից: Զինվորը մի մեծ կրակ ձեռքի մեջ պահած ետ եկավ և հերթով վառեց բոլորի գլանակները: Այդ տեսարանից սարսափած՝ սոսկալի դողը նորից բռնեց Մուխտի էֆենդուն:

Պարոնայք, վանքի պաշտպանների զինվորական խորհուրդը ինձ է լիազորել բանակցելու ձեզ հետ, ասաց Անդրանիկը: Իսկ սուլթանի կողմից ո՞վ է լիազորված բանակցություն վարելու ինձ հետ:

Գլխավոր ոստիկանապետը ձեռքով ցույց տվեց Մեհմեդ էֆենդուն:

Մեհմեդը զգաց, որ բաշքոմիսերը վախենում է. ուստի, տեղից վեր կենալով և դեմքին ամենադաժան արտահայտություն տալով, հետևյալ ճառով դիմեց Անդրանիկին:

Պարոն փաշա, մենք այստեղ եկել ենք սուլթանի հրամանով: Ձեր գլուխը թանկ է հյուքմեթի համար, բայց նա այժմ մեր ձեռքի մեջ է և, եթե կռիվը շարունակվի, ես պարտավոր եմ այդ գլուխը կտրել և նվիրել փադիշահին, որի ծառան եմ ես:

Քո գլուխը իմ գլխին կհետևի, լեզուդ ծոծրակիցդ դուրս քաշած, կարճեց Անդրանիկը ձեռքը իր սրի բռնակոթին դնելով:

Մեհմեդ էֆենդին անխափան շարունակեց:

Սուլթանի, Ալի և Ֆերիք փաշաների և կուսակալի կողմից իբրև պատվիրակ ներկայանալով այստեղ, ուզում ենք իմանալ, թե դուք և Գևորգ Չաուշը ձեր զինվորներով ինչու՞ եք մտել այս վանքը և դուրս չեք գալիս այստեղից:

Պարոն պատվիրակ, խոսեց Անդրանիկը, մեր նախահայրերը այս վանքը շինել են մեր հավատքի համար, և մենք Սասնո լեռներից ուխտավորի մտքով եկանք այստեղ, բայց ձեր զորքը Մուհամեդ Ալի փաշայի գլխավորությամբ պաշարվեց մեզ, և մենք ստիպված եղանք դիմել ինքնապաշտպանության:

Ձեզ պետք է հայտնի լինի, ասաց Մեհմեդ էֆենդին, որ դուք սուլթանի անբարեհույս մարդիկն եք և ուր էլ լինեք, ձեզ սպասում է հալածանք և հետապնդում: Եթե ուզում եք, որ ձեր գլուխը ձեզ պատկանի, եկեք անձնատուր եղեք, և մեր գթառատ սուլթանը բոլորիդ ներում շնորհելով ազատ կարձակի ձեր տները:

Անդրանիկը պատասխանեց, որ սուլթանի երկրում իրենց օջախների ծուխը վաղուց մարած է, և իրենք տուն չունեն վերադարձի համար: Որ իրենք զենքը վայր կդնեն միայն այն ժամանակ, երբ արդարացի զոհացում տրվի իրենց պահանջներին:

Մեհմեդ Խալրթը ցանկացավ իմանալ, թե որոնք են այդ պահանջները:

Այո, ի՞նչ է նպատակդ և ի՞նչ կուզես, իր օգնականի համարձակ կեցվածքից քաջալերված հարցրեց Մուխտի էֆենդին և դողդոջուն ձեռքով թուղթ ու մատիտ առավ, որ նոթագրի:

Անդրանիկը այդ պահանջները շատ հակիրճ կերպով այսպես ձևակերպեց. թու՛րք և քրիստոնյա բոլոր ազգությունների կատարյալ հավասարություն օսմանյան կայսրության մեջ և հայ պետականության վերականգնում Ռուսաստանի և եվրոպական մեծ տերությունների հովանավորության տակ:

Դուք դարձյա՞լ ձեր հույսը կապել եք Եվրոպայի հետ: Չխրատվեցի՞ք: Մենք, սուլթանի մարդիկս, փորձառություն ունենք, որ Եվրոպան քրիստոնյաների համար խոսել գիտե միայն, բայց երբեք գործել: Եթե մենք բոլոր հայերին ոչնչացնենք, Եվրոպայի հոգը չպիտի լինի: Դուք վերջերս նույնիսկ ձեր սուտ կրոնի անհավատ թագավորների օգնությանը դիմեցիք՝ պատվիրակ ուղարկելով Եվրոպա և նա այնտեղից վերադարձավ բերելով միայն մի ոսկեգույն օրորոց:

Ստրուկի և հպատակի օրինական ձգտումն է ձեռք բերել ազատություն: Ի կատար ածեք մեր պահանջները, և մենք պատրաստ ենք դուրս գալու վանքից, վճռաբար հայտարարեց հայդուկապետը, իսկ եթե մերժվենք, մենք զենքը վայր չենք դնի և կշարունակենք կռիվը բռնակալ կարգերի դեմ:

Եվ դուք ձեր մի բուռ մարդկանցով այդքան անընդունելի պահանջնե՞ր եք անում:

Մեր պահանջը մեր ամբողջ ազգի և ձեր տերության քրիստոնյա և ոչ քրիստոնյա բոլոր ճնշված ազգությունների պահանջն է:

Իսկ ես կարծում եմ, ձեզ համար լավագույնը այն է, որ հաշտության եզր գտնեք սուլթանի հետ, չէ որ այդպես պաշարված մնալով ամենքդ էլ կմահանաք:

Անդրանիկը պատի երկայնքով շարված սնդուկները ցույց տալով՝ ասաց. Մենք մահը աչքի տակ առնելով ենք զինվել բռնակալության դեմ: Այն օրից, երբ զենք վերցրինք՝ որոշեցինք մեռնել: Այս սնդուկների մեջ որքան փամփուշտ կա կվառենք, ապա կմեռնենք: Մենք՝ պահանջողներս և նահատակվողներս նման ենք սունկի: Ընկածի տեղ հազարավորները կբուսնեն:

Պարոն փաշա, որքան մեզ հայտնի է, դուք հյուսնի զավակ եք և ինքներդ էլ հյուսն եք: Ինչու՞ եք թողել ձեր Շապին սարը և Սասուն գալով այդպես բուռն կերպով աշխատում եք, որ բարեգութ սուլթանի գահը կործանվի:

Ճշմարիտ է, իմ հայրը հյուսն էր, բայց մի երեկո գըլուխը արյունվա եկավ տուն: Ովքե ր էին այդ ոճիրն արել սուլթանի մարդիկ: Ինչու՞. որովհետև նա քրիստոնյա էր: Այլևս ինչպե՞ս կարող էր այդպիսի դժբախտ հյուսնի որդին հանգիստ սրտով հյուսնություն անել: Լավ կյանքից չէ, որ մենք զինվելով բարձրացել ենք լեռներ: Ո՞վ կործանեց Շենիքի հերոս իշխան Գրքոյին: Ո՞վ պատճառ դարձավ, որ հերոսուհի Շաքեն իրեն գահավեժ նետի ժայռերից: Ո՞վ քարուքանդ արեց իշխան Մակարի և Գալեի հայրենի գյուղը՝ Սպաղանքը: Ո՞վ կախաղան բարձրացրեց Մարգար վարդապետին: Ո՞վ Միհրան Տամադյանին ջախջախված ոտքով բանտ առաջնորդեց: Ո՞վ առևանգեց Ղարսա Միրոյի գեղջուկ աղջկան: Ո՞վ ռանչպար Օհանին բուխարիկի մեջ վառեց: Ո՞վ սպանեց ս. Աղբերիկի վարդապետներին և վանահորը: Ո՞վ կտրեց Սողորդի հերոս Սերոբ Աղբյուրի գլուխը: Եվ դեռ հարցնում եք՝ ի՞նչ է իմ նպատակը և ի՞նչ եմ ուզում:

Անդրանիկը խոսում էր տաքացած, մեջքով դեպի սնդուկները, ոտքը սեղմած գետնին, ձեռքը սրի կոթին դրած:

Իսկ Խալիլ աղային ո՞վ սպանեց:

Խալիլ աղան կտրեց մի հերոսական գլուխ և վրան տվեց իր պիղծ գլուխը: Դուք մեզ՝ ֆիդայիներիս, ավազակներ եք կոչում: Ավազակներին պետք է կառավարությունը ինքը իր մեջ փնտրի: Մենք խաղաղ ժողովրդին ոչ մի օր չարիք չենք պատճառել: Խալիլը ոճրագործ էր, և ես այս ձեռքերովս նրա վիզը կտրեցի: Այդպես կլինի բոլոր ոճրագործների հետ: Վաղ թե ուշ բոլոր բռնակալների գահերը պիտի տապալվեն: Եվ մենք մեր լեռներին ու բերդերին ապավինած ջանում ենք, որ այդ անարգ գահերից մեկը շուտ տապալվի սուլթան Համիդի արյունոտ գահը:

Իսկ ես, պարոն փաշա, այդ գահին բազմած սուլթանի անունից հրավիրում եմ ձեզ, որ այսօր ևեթ ձեր զենքերը հանձնեք Ալի փաշային և դուրս գաք վանքից: Մեր թագավորի ձեռքի վրա մի մեծ ուռուցք է գոյացել: Այդ ուռուցքը Սասունի մեջ գործող հայդուկներն են Անդրանիկը և Գևորգ Չաուշը: Դուք ձեր բոլոր ուժերով պիտի գաք և հանձնվեք առանց արյունահեղության, հակառակ պարագային սուլթանը մեծ ուժ և կարողություն ունի այդ ուռուցքը շուտով առողջացնելու վիրահատության միջոցով:

Կերևի թե մենք իրար չենք հասկանում, ասաց Անդրանիկը: Մենք հարյուրավոր մղոններ կտրած այստեղ ենք

եկել մեր պատանքները մեր տոպրակների մեջ դրած: Մենք Ալի փաշային անձնատուր չենք լինի և մեր զենքը վայր չենք դնի: Եթե այս վանքը ցուրտ է ձեզ համար, մենք կարող ենք դյուրացնել ձեր ելքը:

Ա՞յդ է ձեր վերջնական վճիռը և կարելի չէ՞, որ սուլթանի հանդեպ ավելի գիջող դիրք բռնեք:

Ես մեր պահանջը ասացի և ավելին խոսելու տրամադրություն չունեմ, կտրուկ եզրափակեց հայդուկապետը և տեղից վեր կենալով մոտեցավ դիտանցքին:

Ներքևում հայդուկ քահանան և մշեցի հայ կանայք շարունակում էին դիրքեր փորել: Քահանան թևանոցով սրբեց քրտինքը և քլունգը վերջին անգամ

բարձրացնելով թափով իջեցրեց խրամատի մեջ:

Ներս մտավ մեծաբեղ մի զինվոր և հայտնեց, թե Ալի փաշայի ասկյարները ֆեսերը հրացանների ծայրերին անցկացրած խաղացնում են դիրքերի ետևից, որ հատուկների փամփուշտները սպառեն: Արդյոք զարկե՞ն, թե ոչ:

Եթե ֆես է՝ մի զարկեք, իսկ եթե գլուխ է՝ զարկեք, կարգագրեց Անդրանիկը հեռադիտակը արագորեն բարձրացնելով աչքերին:

Մի քանի նոր գլուխներ և կարմիր ֆեսեր թափվեցին ձյուների վրա:

Մուխտի էֆենդին, որ ամբողջ բանակցության ընթացքին լուռ նոթագրում էր՝ մատիտը ձեռքի մեջ խաղացնելով, բոլորովին սփրթնեց և իրեն խիստ անհանգիստ էր զգում:

Միգուցե Մուխտի էֆենդին ուզում է պետքարա՞ն գնալ, հարցում արավ Մեհմեդ Խալրթը՝ նկատելով բաշքոմիսերի անհանգիստ վիճակը: նա այդ խոսքը այնպես արտասանեց, կարծես հաստատ համոզված էր, որ պատասխանը մերժողական է լինելու և գիտեր, թե դրանից հետո ինքը ինչ պետք է անի:

Ոչ, ես պետքարանի կարիք չունեմ, ասաց Մուխտի էֆենդին:

Ուրեմն դու այստեղ կեցիր և զրուցիր Հեսու վարդապետի հետ, մինչև ես պետքարան երթամ և վերադառնամ: Գնանք, տղաս, ինձ ցույց տուր տեղը, ասաց Մեհմեդը և ինձ հետը առնելով ելավ առաջնորդարանից:

Ես նրան ուղեկցեցի այն սենյակը, ուր գտնվում էին Գեվորգ Չաուշը և զինվորական խորհրդի երեք ուրիշ անդամները: Մեկի գլխին փափախ կար և, որքան նկատեցի, մի մատը կտրված էր: Ես կանգնեցի շեմքին, իսկ Մեհմեդը ներս մտավ, և տեսա, թե ինչպես ինքը և Գևորգ Չաուշը գրկախառնվեցին:

Աֆերի՛մ, այդպես ամուր կացեք, միայն զենքով կա հայոց փրկություն, քաջալերեց Մեհմեդ էֆենդին նրա ուսերը ծեծելով: Չաուշ, շարունակեց նա, դուք վանքի մեջ երկա՞ր եք մնալու:

Որքան որ մեր պաշարը բավարարի:

Միայն թե խորհեք շուտ հեռանալ վանքից, որովհետև Ալի փաշան որոշել է վանքը թնդանոթի բռնել, իսկ ինչու պատճառ դառնալ, որ այս հոյակապ շինվածքը կործանվի:

Ես դռան ճեղքից լսում էի, թե ինչպես Մեհմեդ էֆենդին աճապարանքով էր խոսում՝ շարունակ դեպի դուռը նայելով, մտահոգվելով, թե բաշքոմիսերը կարող է կասկածել իր ուշացման համար: Եղավ մի պահ, որ նրանք լռությամբ նայեցին իրար, և ես Մեհմեդ էֆենդու դեմքի վրա կարդացի. «Ես էլ եմ ուզում սուլթանի բերդը քանդել, բայց ես այդ բերդի մեջ եմ, իսկ դուք բերդից դուրս: Ձեր ուժը անձրևի կաթիլ է բերդի պատերին ընկած, թեև դա էլ մեծ բան է: Թուրքն ասում է՝ «տամլա, տամլա սելավ օլուր» (կաթիլ-կաթիլ հեղեղ կեղնի): Բայց ես, որ այդ բերդի դուռը ներսից չբանամ, սելավն էլ անկարող կլինի քանդել այդ անիծյալ ուժը»:

Քաջ կացեք, ասաց Մեհմեդ էֆենդին: Վզիս շուրջ փաթաթված այս սպիտակ սավանը թող ազդանշան լինի, թե դեպի ուր է իմ առագաստը լողում: Ես հավատափոխ դարձա տառապանքով, որ իմ տառապյալ ժողովրդին օգնեմ: Իմ ծիծաղն են հարուցում այն հայերը, որոնք ինձ դավաճան և հայությունից իսլամ դարձած են անվանում: Թող անիծեն և հայհոյեն ինձ: Թող ինձ «դարձուկ» համարեն: Հետո կիմանան, թե ով է եղել մանազկերտցի պարոն Ավետիսը: Այս ասելով Մեհմեդ Խալրթը վերստին համբուրվեց Գևորգ Չաուշի հետ և խնդրեց նրան իրենց գնալուց հետո պետքարան մտնել: Այնտեղ մի բան կգտնես քեզ համար, հուշեց նա:

Քոմիսերը շրջվեց դեպի պետքարանի դուռը: Նրա գնալուց հետո Գևորգը ինձ ներս կանչեց:

Լավ է, որ սարկավագի շորերով ես ծպտված, ասաց նա: Մենք այս գիշեր կամ ամենաուշը մի օր հետո ստիպված ենք հեռանալ վանքից:

Բայց զինված քահանան և հայ կանայք եռանդով նոր դիրք են փորում, նկատեցի ես:

Հենց նոր կարգադրություն արվեց, որ աշխատանքը դադարեցվի: Մեր փամփուշտը և հացի պաշարը վերջացած է:

Ինչպե՞ս թե վերջացած է: Պատի ամբողջ երկայնքով փամփուշտով լի արկղեր են շարված:

Բոլորը դատարկ են, բացի վրայի մի քանի արկղերից: Վանքի մեջ մոմի դատարկ սնդուկներ կային: Անդրանիկը կարգադրեց դրանք առաջնորդարանի մեջ իրար վրա շարել, որ կարծվի, թե մենք կարող ենք երկար դիմադրել: Բայց իրապես ամեն բան վերջացած է: Սասնո ճանապարհը փակ է, և մեր սասունցի տղաները չկարողացան օգնության հասնել: Այսօր մորթեցինք վերջին երինջը: Նույնիսկ վառելափայտ չունենք, սկսել ենք վանքի գերաններն ու փայտյա մահճակալները վառել: Վախենալով, որ վանքի ջուրը կկտրեն, Անդրանիկը կարդադրել էր վանքի բոլոր գինու կարասները և մատուռի կաթսաները ջրով լցնել: Այդ ջուրն էլ վաղուց սպառվել է: Ստիպված ձյուն ենք հալեցնում, Իսկ երեկ առավոտյան Արաբոյի հայրը մեռավ:

Արաբոյի հա՞յրը: Մի՞թե նա այստեղ էր:

Վանքի գոմում էր ապրում: 95 տարեկան ճերմակ մորուքավոր մի ծերունի էր: Իմ այն հարցին, թե որտեղացի է՝ բոնաշենցի եմ, պատասխանեց, Արաբոյի հայրն եմ, Կարմիր իրիցու տներից: Վաղուց հիվանդ պառկած էր գոմում: Գերեզմանը մեր նախրապահը փորեց: Թաղված է զանգակատան դռան մոտ մեր զինվորներից մեկի կողքին:

Մեր վիճակը ծանր է, շարունակեց Գևորգ Չաուշը: Վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետը և իր մարդիկ այժմ զբաղված են մեզ համար սպիտակ շապիկներ կարելով: Մի մարտական առաջադրանք ունեմ քեզ: Ներքնահարկի մութ խցիկներից մեկում կապված է Անդրանիկի ձին: Թամբը պահված է ջրհորի մեջ սալաքարի տակ: Քիչ հետո զգուշությամբ ցած իջիր և վանքի նախրապահի հետ կարգադրիր, թե ինչ միջոցով հնարավոր է ձին շրջապատումից հանել, երբ վերջին զինվորը դուրս գա վանքից: Իսկ այժմ շտապիր Հեսու վարդապետի մոտ, որ կասկածի առիթ չտաս սուլթանի բանագնացներին:

Մեհմեդ էֆենդու տեսակցությունը Գևորգ Չաուշի հետ «պետքարան» գնալու պատրվակով հաջողությամբ ավարտվեց: Երբ ես ետ եկա, Մեհմեդ էֆենդին Բաշ-քոմիսերի մոտ կանգնած իր գոտին էր ամրացնում:

Վա՜հ, սպասեցեք, ես իմ մաուզերը մոռացա պետքարանում, բացականչեց Մեհմեդ Խալրթը և արագ ետ դարձավ, որ գնա:

Չերթա՛ս, քեզ կսպանեն, շուտ դուրս գանք այս վանքից, ասաց Մուխտի էֆենդին նրա թևից քաշելով: Մուխտին դողդողալով վերցրեց սպիտակ դրոշակը սեղանի վրայից և Անդրանիկի ու նրա զինվորների հայացքի տակ իր պատվիրակներով հեռացավ սրահից:

Տեսա, թե ինչպես նրանք արագ իջան բակը, վանքի փոքրիկ հացերից մի հաց առան կերան և դրոշակը պարզած դիմեցին դեպի Աստվածածնի մատուռը: Այստեղ նրանք հեծան ձիերը և շտապեցին դեպի Մուշ:

Ես իջա վանքի ներքնահարկը: Գտա այն խուցը, ուր Ասլանն էր կապված: Նախրապահը քնած էր մսուրի մեջ:

Մութ, ամպամած գիշեր էր:

Կանգնեցի Ասլանի կողքին և սկսեցի մի բարակ ճեղքից դուրս նայել: Շունչս պահած աշխատում էի մի բան որսալ մթության մեջ: Սառած ձյուների վրա պառկած էին Ալի փաշայի ասկյարները, ոմանք քնով տարված, ոմանք՝ հավիտյան քնած:

Վանքի բակի մեջ երևաց Անդրանիկը իր զինվորներով: Նա ինչ-որ թելադրություններ արեց նրանց, պատվերներ տրվեց, ցույց տվեց վանքից ապահով դուրս գալու ձևերը: «Տղայք, հասկացա՞ք ձեր կատարելիք պարտականությունը», հարցրեց: «Այո, փաշա, հասկացանք և պատրաստ ենք», ասացին նրանք:

Ապա բակ կանչեց վանքի ուսուցիչներին և որբերին: Երբ նրանք եկան, լսեցի, թե ինչպես նա նրանց պարզեց իր նպատակը: Դաստիարակներին ասաց, որ ձևականության համար ինքը նրանց պիտի ծեծի որբերի առաջ և պիտի

բանտարկի, որպեսզի նրանց ազատի որևէ պատասխանատվությունից վանքից դուրս գալուց հետո: «Ես ձեզ վրա պիտի գոռամ և ասեմ՝ եթե դուք հավատարիմ բարեկամ էիք կառավարությանը, ինչու՞ զանգակը չքաշեցիք և ձայն չտվիք մեզ, որ վանքի մեջ ֆիդայիներ մտան: Ձեզ վրա դուռը պիտի փակեմ և բանալիների տեղը միայն տնտես մայրիկին պիտի հայտնեմ», ասաց նա:

Այդպես էլ արեց: Բանտարկեց բոլոր որբերին և դաստիարակներին: Տնտես մայրիկը եկավ, մեկը այն կանանցից, որ դիրք էր փորում վանքի պատի տակ:

Մայրիկ, ահա բանալիները նետված են ցեխ ու ձյունի մեջ, ասաց նա, երբ մենք դուրս ելնենք, դուռը կփակես և երկաթը կքաշես վրան: Դուռը չես բանա, մինչև ոն Ֆերիք փաշան, վանահայր Հովհաննեսը և Առաջնորդը չգան: Եթե թուրք զինվորները սպառնան՝ մի վախենա: Եթե սանդուղքներ դնեն և պարսպից ներս գան, դարձյալ դուռը մի բանա, որ ասկյարները վանքը չկողոպտեն: Գևորգ, Սեյդո, Կոտո Հակոբ, Կայծակ, Որոտ, հագեք ձեր ճերմակ շապիկները:

Եղավ կեսգիշեր:

Վանքի փոքրիկ դռնից իրար ետևից ինչ-որ զինված մարդիկ դուրս եկան: Բոլորն էլ հագած էին ճերմակ շապիկներ, գլուխները ճերմակ փաթաթած:

Գևորգ Չաուշի և Անդրանիկի մարտիկներն էին:

Նրանք առաջանում էին զույգ-զույգ, առաջապահ, հետնապահ և կարգապահ խմբերի բաժանված: Հերթով համբուրում էին վանքի էբենոսյա կամարակապ դուռը, շատ կարճ աղոթք մրմնջալով և անձայն, անշշուկ ընթանում էին իրար ետևից ուսապարկերը շալակած, ոմանք կոացած, իսկ ոմանք ուղղակի սահելով ձյունների վրայով և ճեղքելով վանքը պաշար ած զորքի շղթան: Կատաղի քամին նրանց երեսներին և ճերմակ շապիկներին զարկվելով, ասկյարների վառած կրակների վրայով որոտաձայն իջնում էր դեպի Ալվառինջի սարերը: Ահա անցան Ալվառինջու Սեյդոն, Ցրոնաց Մուշեղը, Մ առն կա Պողեն, Կայծակ Անդրեասը և Հաջի Գևոն: Հայդուկ քահանան էլ անցավ՝ կարմիր իրիցու ավետարանը թեվատակին: Առջևից Անդրանիկն է գնում: Այդ մեկը կարծեմ Գևորգ Չաուշն է: Թիկունքից Կոտո Հակոբն է քայլում: Իսկ նա Գոմսա Իսոն է:

Պատնեշների ետև մշուշի մեջ աղոտ պլպլում Էին թշնամու վառած կրակների հատուկենտ լույսերը: Ինձ այնպես թվաց, որ զորքի պահակները արթուն հսկում Էին, բայց չէին կրակում, վախենալով իրենց կյանքը վտանգի տալ: Միայն վերջին պահին մի քանի կրակոց լսվեց:

Յահուդի Բարսեղը սպանվեց, հնչեց վերջին անցնողներից մեկի ձայնը:

Առավոտ կանուխ դռները բացվեցին, և ծերունազարդ Հովհաննես վանահայրը մի որբ տղայի ուղարկելով Ալի փաշայի մոտ, նրան իմաց տվեց, թե Գևորգ Չաուշն ու Անդրանիկը իրենց հայդուկներով մեկնել են վանքից:

Ալի փաշան և իր զորքը բոռի փչելով քնաթաթախ խուժեցին վանք, ոմանք ոտավոր, ոմանք էլ գրաստներ հեծած:

Ես փոքր հասակից արկածախնդիր էի և հանդուգն: Խուցի մեջ թուրք զինվորի հագուստ կար: Վանքի նախրապահը հագուստներից մեկը ինձ տվեց: Իսկույն փոխեցի իմ շորերը և սալաքարը մի կողմ հրելով ջրհորից դուրս բերեցի թամբը: Երբ տեսա, որ դռանը քիչ մարդ կա, ձին թամբեցի և արագ մոտենալով վանքի շեմքին, մի ակնթարթում ինձ նետեցի թամբին և կիսախավարի միջով դուրս սլացա դեպի Արաբոյի քարը՝ բացականչելով.

Այդ գյավուրները ո՞ր կողմը փախան:

Ո՞վ է, բարձրաձայն հարցրին ճանապարհին հսկող ասկյարները:

Մեր երեսունհինգերորդ գնդի գիշերապահ շրջիկներից է, թուրքերենով արագ պատասխանեց Շապինանդը՝ հեռվից ճանաչելով իր ձիու խրխինջը և սմբակների ձայնը:

Աչալուրջ եղեք: Մեզ լուր է հասել, որ Անդրանիկ փաշան և Գևորգ Չաուշը իրենց ֆիդայիներով այս գիշեր պետք է դուրս գան վանքից: Ում որ տեսնեք ճանապարհին՝ հրացանազարկ արեք, պատվիրեցին Ալի փաշայի գիշերապահները:

Մենք էլ նրանց ենք հետապնդում, տեսնողին հրացանազարկ կանենք, փոխադարձեց Անդրանիկը ինձ ձեռքով անելով, որ իր կողմը գնամ:

Մի կցկտուր ձայն հանկարծ գոչեց.

Դուք ո՞վ եք:

Ֆիդայիները հրացանները ուղղեցին նրա կրծքին:

Չե՞ս ճանաչում ինձ: Ես հարյուրապետ Մեհմեդ էֆենդին եմ: Ժամ է, որ այստեղ խուզարկում եմ, իսկ դուք քնած եք: Այդպե՞ս պիտի հսկեք ջան ֆիդայիներին՝ արգելելու նրանց փախուստը:

Անդրանիկը խոսքը Գևորգ Չաուշին ուղղելով ասաց. «Մեհմեդ Չաուշ, այս մեկը քնած էր, այնպես չէ՞»:

Այո, էֆենդի, քնած էր, պատասխանեց Գևորգը:

Աստվա՛ծ, աստվա՛ծ, չեմ գիտեր, թե դուք ինչ տեսակ մարդիկ եք:

Ձայնդ կտրի, թե ոչ՝ շան պես պիտի սատկես: Ասկյարը վախից սկսեց գոռալ.

Ջան ֆիդայիները փախա՞ն, ֆիդայիները փախա՛ն... Թշնամու բոլոր դիրքերից սոսկալի հրացանաձգություն սկսեց: Գնդակների սուլոցը, միախառնված ձյունաբքի աղաղակին, գալիս-անցնում էր մեր գլուխների վրայով, բայց մենք անձայն, մեգ ու մշուշի միջով դիմում էինք դեպի Արաբոյի քարը, դեպի Հավատորիկի ամենաբարձր լեռը Ծիրնկատարի վրա: Որքան վեր էինք ելնում, այնքան քամին սաստկանում էր: Վերջապես հասանք Արծվի քարին: Արևը ծագեց և մենք այդտեղ էլ իրարից բաժանվեցինք:

Գևո՛րգ, այս տղային քեզ եմ հանձնում, արևով լուսավորված ձմեռային Տարոնը ցույց տալով խոսեց Շապինանդը:

նա իմ առաջադրանքը հերոսաբար կատարեց ասորի ցեղապետի մտրուկը դուրս բերելով թշնամական շրջապատումից, ասաց Գևորգ Չաուշը:

Ես սանձը դրեցի Անդրանիկի ձեռքը:

Նա կռացավ, համբուրեց իմ ճակատը, ապա գրկախառնվեց Գևորգ Չաուշի հետ, և Ասլանին հեծնելով ձյուների վրայով անցան լեռան ետև:

Թե ուր գնաց՝ չիմացա:

Շատ հետո լուր ստացվեց, որ նա Կովկասի վրայով գնացել է Բուլղարիա:

ԵՐԴՈՒՄ ԵՎ ՊԱՏԻԺ

Վանքի կռվից հետո Գևորգ Չաուշը ինձ տարավ Մոկունք գյուղը Իգնատիոս անունով մի շինականի տուն: Դեռ ներս չմտած, Չաուշն ասաց. «Ինչ-որ տեսնես ու լսես, այնքան գաղտնի պիտի պահես, որ շապիկդ անգամ չիմանա: Դու պիտի մոռանաս այն դեմքը, որ տեսար, այն խոսքը, որ լսեցիր և այն շեմքը, ուր ոտք կոխեցիր»:

Մոռացա, գոչեցի ես:

Հացատան ամբարների մոտով մենք մտանք մշեցու օդան: Բուխարիկի մոտ կանգնած էր մի երիտասարդ քահանա առաջը սեղան, վրան՝ ծածկված մի գիրք:

Ծանոթացի՛ր, սա այն զինված քահանան է, որ մշեցի հայ կանանց հետ դիրք էր փորում վանքի պաշտպանության համար: Խասգյուղացի է և անունը Տեր Քերոբ: Մարտական անունը՝ Տեր-Փոթորիկ:

Իսկապես նա էր այն զինված մորուքավոր մարտիկը, որին տեսել էի վանքի փոքր դռան առջև քլունգով խրամատ փորելիս:

Օդային կից էր գոմը: Գոմի մթության մեջ շեմքի մոտ կանգնած էին երեք տղամարդ մազոտ աբաներով: Մեծի դեմքը ես չէի տեսնում: նա լուռ ծխում էր, մեջքով դեպի մեր կողմը դարձած:

Ո՞րն է քո սիրեցյալը, շարունակեց Գևորգ Չաուշը մոտենալով և հենվելով գոմի պատին:

Կինն է, հարեց կիսամթում կանգնածներից մեկը:

Ոչ, որդին է, հեգնեց Տեր-Փոթորիկը:

Հայրենիքն է, գոչեցի ես:

Ապրես, որդիս, ասաց Գևորգ Չաուշը քաջալերված իմ պատասխանից: Դրա համար էլ դու չպետք է ուրիշ սիրեցյալ ունենաս, որ միշտ նրան սիրես, նրան նվիրվես, նրան պաշտես: Քո սիրուհին Հայաստանն է, շարունակեց Չաուշը: Նա շղթաների մեջ է: Դու պետք է փշրես այդ շղթաները և նրան ազատ արձակես: Հայաստանը մի առասպելական նժույգ է, որին չարքերը դարերով կաշկանդել են մութ զնդանում: Դու պետք է նրան այդ զնդանից հանես այն նժույգի նման, որ փակված էր Առաքելոց վանքի ներքնահարկում: Այն ամենը, որ դու մինչև այժմ տեսար ու տոկացիր, միայն մի փոքրիկ վարժոց էր այդ ազատագրության ճանապարհին: Մեկ անգամից, ասաց նա, հնարավոր չէ փրկել մի ժողովրդի, որ վեցհարյոլր տարի տանջվում է օտարի լծի տակ: Հարկավոր է աստիճանաբար գնալ դեպի նպատակի իրագործում: Հարկավոր է զգուշությամբ իջնել այն ստորերկրյա նկուղը, ուր այդ ազնիվ նժույգն է կաշկանդված, գտնել նրա սանձերը, որոնել, սալաքարի տակից դուրս բերել նրա թամբը: Դու չպետք է ունենաս քո սեփականը, որ այդ մեծ ընդհանրականի բաղձանքը ունենաս: Դու պետք է լինես քո ծառան և քո ընկերոջ ծառան:

Ես եկել եմ մատղվելու: Եթե չկարողանամ նահատակ դառնալ, թող դառնամ գոնե մի պարզ զոհաբերում հայրենիքի համար, ավելացրի ես:

Դրանից հետո Չաուշն ինձ հրավիրեց, որ ես իր ներկայությամբ երդում տամ խաչի, ավետարանի և սրի վրա:

Տեր-Փոթորիկը ծածկոցը քաշեց:

Սեղանի վրա դրված էր Կարմիր իրիցու տան «Կոճղեզ» ավետարանը, որ ես Թաղվձորից բերելով հանձնել էի Առաքելոց վանքին:

Հին հայերը այս գրքի վրա են երդվել: Նա կորած էր և դու գտար, ասաց Տեր-Փոթորիկը և «Կոճղեզի» աջ ու ահյակ կողմերում մեկական մեղրամոմ

վառեց և մեծ լանջախաչը հանելով դրեց նրա վրա: Չաուշն իր դաշույնը դրեց խաչի վրա: Սև աբավոր այրերից երկուսը գոմից ելնելով տեղ գրավեցին սեղանի շուրջ, իսկ երրորդը, որ ծխում էր՝ հենված մնաց գոմի պատին, կիսամութի մեջ: Ես սեղանին պլպլացող կանթեղների առաջ ծունկի գալով՝ երդվեցի.

Երդվում եմ իմ պատվի և ազգության վրա, ասացի ես, իմ բոլոր ուժով, եթե հարկ լինի նաև իմ արյունով, ծառայել Հայաստանի ազատագրության դատին ընդդեմ սուլթանի բռնակալության: Այսուհետև իմ բարձը Հայաստանի լեռները կլինեն և իմ ամենամեծ բաղձանքը՝ Հայրենիքի համար մեռնելը: Բարով արժանանամ հրեղեն գնդակի համբույրին:

Երդումդ ի կատար, հնչեց Տեր Փոթորիկի ձայնը: Եվ նա խաչը սեղանից վերցնելով, արձանի պես պահեց օդում: ու ես ոտքի ելնելով ու սեղանին կռանալով, համբուրեցի նախ սուրը, ապա «Կոճղեզ» ավետարանը և վերջում՝ օդի մեջ պարզած խաչը:

Անու՞նդ:

Կնքանունս Մամիկոն է, բայց տատս ինձ Սմբատ էր կոչում:

Մոռացիր այդ երկուսն էլ: Այսուհետև քո զինական անունը կլինի Մախլուտո: Կրկնիր նոր անունդ, կարգադրեց Տեր Փոթորիկը:

Մախլուտո՛:

Առաջին գործը, որ հանձնարարվեց ինձ՝ շալակատարի պաշտոնն էր: Այդ պաշտոնը կատարողը պետք է ֆիզիկապես ուժեղ լիներ, իսկ ես թիկնեղ էի, ամուր կազմվածքով և մեջքով տոկուն:

Դու հրաշալի շալակատար կլինես, ասաց Գևորգ Չաուշը, այսինքն՝ հեղափոխության բեռնակիր:

Ի՞նչ պետք է շալակեմ, հարցրի ես:

Կարևորը շալակելը չէ, ասաց նա, այլ շալակածը զգուշությամբ տեղ հասցնելը: Շալակատարի աշխատանքը ամեն մարդու չի կարելի վստահել: Հավատարիմ մարդիկ են պետք, որոնց թիվը տակավին քիչ է մեզ մոտ:

Այս խոսքերը ինձ մխիթարեցին: Ուրեմն ես գտնվում էի հավատարիմների ցանկի մեջ: Եվ առաջին բեռը, որ կրեցի իբրև շալակատար, մի ծանր արկղ էր, որ նույն գիշերը Մշո տակի այգիներից տեղափոխեցի Մոկունք:

Բեռը իջեցնելուց հետո, թոթվեցի հոգնած ուսերս և ինձ զգացի անսահման հպարտ: Շատ բեռներ էի կրել մեջքով, իսկ այս մեկը ուրիշ էր: Այդ իմ առաջին ծառայությունն էր հայրենիքին ֆիդայական երդումից հետո և իմ առաջին սրբազան պարտքը Սերոբ Աղբյուրի թարմ հիշատակի հանդեպ:

Հաջորդ օրը նոր կարգադրություն եղավ, որ ես այդ արկղը Մոկունքից տեղափոխեմ Սուլուխ: «Չէ, ասացի, սրանք ուզում են ինձ վարժեցնել երկար ճանապարհի բեռնակրության»:

Սուլուխ չհասած, քեզ դիմավորելու կգա Զնդո անունով մի երիտասարդ Արտոնք գյուղից, զգուշացրեց Գևորգ Չաուշը:

Քու՞րդ է, հարցրի:

Հայ է, բայց քոլոզ կա գլխին:

Վերցրի իմ բեռը և ճանապարհ ընկա:

Մոկունքից բավական հեռացել էի, երբ ականջիս կանացի մի ձայն դիպավ.

Մախլուտո՛, դու՞ էլ եկար ֆիդայի դարձար:

Հազիվ էի նայել շուրջս տեսնելու, թե ո՞վ էր այդ կինը, երբ կարճ մորուքով մի վտիտ տղամարդ գյուղացու հագուստով և մի տիկ շալակին, ետևից գալով ձեռքի գավազանով ամուր հարվածեց մեջքիս:

Շան տղա, դու շալակատա՞ր ես, թե սովորական անցորդ:

Այնքան սպառնական էր նրա հայացքը, որ ես շփոթվեցի: Ես ծնրադիր երդում էի տվել հավատարմորեն ծառայելու ժողովրդի ազատագրության դատին: Դարձել էի հայդուկ, իսկ հայդուկին օրենքով բանադրված էր անծանոթ կնոջ հետ խոսելը: Հայդուկը իրավունք չուներ ամուսնանալ, քանի դեռ հայրենիքը ազատագրված չէր բռնակալության լծից:

Ո՞վ էր այդ կինը: Նույնիսկ չիմացա, թե որտեղից էր գալիս և դեպի ուր էր գնում: Դեմքն էլ կանոնավոր չտեսա: Միայն քայլվածքից կռահեցի, որ բարձրանում էր դեպի լեռներ: Գուցե կապ ուներ ֆիդայիների հետ: Բայց ինչպե՞ս իմացավ իմ անունը: Չլինի՞ թե Զմոն էր: Ու մի սարսուռ եկավ վրաս: Իսկապես, որտեղից գիտեր, որ իմ անունը Մախլուտո է: Միևնույն է, ով էլ լիներ նա, ես կատարել էի ծանր հանցանք: Կարծում էի, թե այդ մի հարվածով ամեն ինչ վերջացավ: Ուզում էի արդարանալ, ասելով, թե այդ կնոջը չեմ ճանաչում, բայց դեռ բերանս չբացած, ձեռնափայտի երկրորդ հարվածը իջավ նույն տեղը: Երրորդն էլ իջավ, չորրորդն էլ: Աստված իմ, ինչպե՞ս էր ծեծում: որքան ուժ կար այդ պոքրիկ վտիտ մարմնի մեջ: Օ՛, ինչ դժվար բան է հայդուկությունը: Երդվել մի սրբացած գրքի վրա, որ մաքրված, լուսավորված էր ամպրոպների փայլով, և այդպիսի դաժան պատժի՞ ենթարկվել: Իզուր, ուրեմն, Թաղվձորի սպիտակամորուս ծերոլնին այդ ավետարանը յոթ անգամ պահեց Մարաթուկի կայծակների դեմ: Երևի դա այն գիրքը չէր, որի վրա ես երդվեցի և աստված ինձ պատժում էր այդ մեղքի համար: Ինչու՞ ես կուլ չգնացի նեմրոլթի ավազներին, Փրե-Բաթմանի կամուրջից չնետվեցի Սասնա գետի մեջ: Երանի թե մեռած լինեի Բաղեշի բանտի ներքնահարկում, կամ Արծվի քարից գահավիժեի անդունդ և չտեսնեի այդ սև օրը:

Հարված հարվածի ետևից իջնում էր վրաս, իջնում էր անողորմ կերպով, սաստկորեն: Իջնում էր մերկ ոտքերիս, մեջքիս, գլխիս: Ստիպված իմ բեռը վայր դրեցի: Ուզում էի գոռալ, բայց զսպում էի ինձ, հպարտությունս թույլ չէր տալիս: Իսկ նա, իմ լռությունը անտարբերության վերագրելով, ավելի ուժգին էր հարվածում: Արյունս եռ էր գալիս, աչքերս մթնել էին, և այդ ամենը մի անիծյալ կնոջ պատճառով: Այո, Զմոներ ամեն տեղ կան: Փորձիր կատարել երդման կամ մաղթանքի որևէ սուրբ արարողություն և սատանան անտեսանելի կպած է ծնկներիդ: Ու ես չիմացա, թե ինչպես իմ բեռը շալակած դիմեցի դեպի Սուլուխ:

Կարծեմ, այդ միևնույն տղամարդն էր օգնել ինձ բեռը մեջքիս բարձրացնելու, ինձ դաժանորեն պատժող վտիտ մարմնով, փոքրիկ մորուսով այդ տղամարդը: Իմ կոպերից արյուն էր ծորում: Փորձեցի աչքերս բանալ, բան չէի տեսնում: Կուրացա՞ միթե: Ու զարհուրելի երկյուղը պաշարեց ինձ:

Այդ դրության մեջ էի, երբ մի տղամարդ մեջքը դեմ տվեց իմ շալակին:

Դու Զնդո՞ն ես, հարցրի:

Այո, Դաշտի Արտոնք գյուղից:

Ձեռքով շոշափեցի, գլխին քոլոգ կար:

Զնդո, կանչեցի ես, գիշե՞ր է, թե ցերեկ:

Ցերեկ է, պատասխանեց Զնդոն:

Թե ցերեկ է, ինչու՞ աչքերս չեն տեսնում:

Երևի բեռը ծանր է եղել:

Զնդոն շալակեց բեռը և ինձ առաջնորդեց Սուլուխ:

Իջանք Մեսրոպ անունով մի գյուղացու տուն, որ Սուլուխի հայտնի տներից էր: Ինձ պառկեցրին այդտեղ և ծածկեցին վերմակով: Այդ միջոցին ներս մտավ նույն տղամարդը դերվիշի կերպարանքով և տեսնելով իմ վիճակը, կարգադրեց, որ մնամ այդտեղ, իսկ ինքը Անդոյին առնելով՝ անհայտացավ:

Մի ամբողջ օր աչքերս փակ մնացին: Ոտքերիս ու գլխիս ցավը տանջում էր ինձ: Ծեծված, ջարդված ընկած էի սուլուխցի Մեսրոպի տանը, աչքերս արյունոտ, գլուխս ուռած:

Ու հիշում էի:

Հիշում էի, թե ինչպես դուրս թռա դպրոցի լուսամուտից և հետևյալ օրը վաղ լուսաբացին հեռացա քաղաքից:

Հիշեցի Մելքոն վարդապետին, նրա արցունքոտ աչքերը, և հայոց պատմության ուսուցչին՝ պարոն Սենեքերիմին, որ եկել էր Փրե Կամուրջի կողմը՝ գետակի սառը ջրով լվացվելու:

Իմ քեռի Բդեին հիշեցի:

Կրակների մեջ վառվում էի: Ջերմություն չէր անցնում: Որոշեցին լողացնել: Գոմի մեջ տաշտակով տաք չուր դրեցին, լողացրին ինձ և անկողին տանելով, ծածկեցին մի քանի վերմակով: Աշխարհում ամեն տեղ բարի պառավներ կան: Չարերն էլ կան, բայց բարիներն ավելի շատ են: Յուղաբեր էր Մեսրոպի մոր անունը: Յուղաբերը կանչեց իր թոռներից մեկին և կարգադրեց, որ գիշերով ս. Ստեփանոսի պուրակը երթա և ուռենու դալար ճյուղերից մի խուրձ բերի՝ լուսաբացի շաղը վրան: Զգուշացրեց այնպես բերել, որ ցողը չթափվի տերևներից:

Շուտով Խուրշուդը (այդպես էր թոռան անունը) կանաչ ուռիների ցողապատ մի խուրձ գրկած եկավ: Քանդեցին այդ խուրձը, ինձ պառկեցրին մեջը և ծածկեցին վերմակով: Ուռենու տերևները սկսեցին տաքանալ և ջերմություն ու գլխիս ցավը լուսադեմին անցավ:

Հաջորդ առավոտյան բոլորովին առողջ էի: Երբ աչքերս բացի, իմ առաջ կանգնած էր Գևորգ Չաուշը և քահ-քահ ծիծաղում էր.

Քեզ ծեծողը ո՞վ էր, հարցրեց:

Մի դերվիշ էր գյուղացու հագուստով և տիկը շալակին:

Այդ դերվիշը Արմենակն էր, որ ներկա էր քո ուխտին:

Ո՞ր Արմենակը:

Մոկնաց գոմի կիսամութի մեջ կանգնած տղամարդը, որ լուռ ծխում էր պատին հենված:

Հրայր-Դժո՞խքը:

Գևորգ Չաուշը մատը դրեց բերանին, որ նշանակում էր թե՝ լռիր:

Կարո՞ղ էի հակաճառել այն մարդուն, որ իմ ներկայությամբ գնդակի մի հարվածով գետին էր տապալել իր աժդահա հորեղբորը:

Իհարկե ոչ:

Եվ ես լռեցի: